ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն
համայնք, հեռ. (094)21-71-09, (091)21-71-05, էլ. փոստ
zovashen.kotayq@mta.gov.am

N 47
01 սեպտեմբեր 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Կից ուղարկվում է Կոտայքի մարզի Զովաշեն համայնքի 01.09.2014թ.-01.09.2015թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը:

Առդիր՝ 2 թերթ:

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014 թ.-01.09.2015թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՍԱՖԱՐՅԱՆ

ԶՈՎԱՇԵՆ 2015 թ.

Հարգելի Զովաշենցիներ 2014 թվականի երկրորդ և 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013 թվականի դեկտեմբերի 20-ին համայնքի ավագանին իր N 26- Ն որոշմամբ ընդունել է 2014 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 6 մլն 775 հազար 800 դրամ , ծախսերը 10 մլն 615 հազար 100 դրամ: Պակասորդը կազմել է 3939 հազար 300 դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին.: Հողի հարկի չափը Զովաշենի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 1 մլն 148 հազար դրամ : 2014 թվականի հողի հարկը հավաքգրվել է 1 մլն 170 հազար 500 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 101,9 %-ը :

2014 թվականի գույքային հարկերը հավաքգրվել են 165.5 %-ով , որը բացարձակ թվով կազմել է 213 հազար 600 դրամ :

2014 թվականի դեկտեմբերի 22-ին համայնքի ավագանին իր N 20- Ն որոշմամբ ընդունել է 2015 թվականի բյուջեն , ըստ որի եկամուտները կազմել են 7 մլն 380 հազար 700 դրամ, ծախսերը 12 մլն 428 հազար 400 դրամ :

Հողի հարկը կազմել է 1 մլն 128 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 329 հազար 600 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 29.2 %-ը :

Գույքային հարկերը կազմել են 210 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 124 հազար 600 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 59.3%-ը :

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Զովաշեն-Հատիս միջհամայնքային ճանապարհի աջ և ձախ կողմերում իրականացվել է ծառատունկ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների չունենք:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար համայնքի հողօգտագործողներին է տրամադրվել պետության կողմից սուբսիդավորված պարարտանյութ, դիզելային վառելիք և բարձրակարգ սերմացուներ: